Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« » մայիսի 2010թ. N .....-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 83-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Երևան քաղաքի ավագանու 2010թ. ապրիլի 12–ի «Գույքահարկի արտոնություն տրամադրելու մասին» N 83–Ա որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

   1) Որոշման 1-ին կետում «2-րդ կետում» բառերը փոխարինել «2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում» բառերով, իսկ «պարտավորությունները» բառից հետո լրացնել «, իսկ սույն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց՝ 2010 թվականի գույքահարկի գծով պարտավորությունները:» բառերով.

   2) Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը «Արցախյան» բառից հետո լրացնել «և Աֆղանստանի» բառերով, իսկ «պատերազմում» բառը փոխարինել «պատերազմներում» բառով.

   3) Որոշման 2-րդ կետը լրացնել 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

   «3) Արցախյան և Աֆղանստանի պատերազմների 2-րդ խմբի զինհաշմանդամների՝ Երևան քաղաքում հաշվառված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունների մասով:».

   4) Որոշումը լրացնել 2.*1. կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

   «2*1. Որոշման 2-րդ կետում նշված անձանց գույքահարկի արտոնություններ տրամադրել սեփականության իրավունքով նրանց պատկանող բնակելի նշանակության շինությունների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ այդ անձանց հաշվառման վայրի բնակելի նշանակության շինությունների նկատմամբ:

Գույքահարկով հարկվող բնակելի նշանակության մեկից ավելի շինությունների առկայության դեպքում սույն Որոշումը տարածվում է այդ շինություններից մեկի նկատմամբ՝ ըստ գույքահարկի արտոնություն ստացած անձի կամ նրա ընտանիքի ցուցումի։».

5) Որոշումը լրացնել 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. այն անձինք, որոնք կհրաժարվեն գույքահարկի արտոնության տրամադրումից, այդ մասին գրավոր հայտնում են համապատասխան վարչական շրջանի ղեկավարին։».

6) Որոշումը լրացնել 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Սույն որոշումը տարածվում է գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության այն շինությունների վրա, որոնք որոշման 2-րդ կետում նշված անձինք ձեռք են բերել կամ որտեղ հաշվառվել են մինչ սույն որոշման ընդունումը։»։

Նախաձեռնության հեղինակ
Երևան քաղաքի ավագանու անդամներ՝

Գ. Գրիգորյան

Ա. Գևորգյան

Ի. Դարբինյան

Հ. Այվազյան

Պ. Փլավչյան

ՏԵՂԵԿԱՆՔ– ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի ապրիլի 12-ի N 83-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին

1. Որոշման 1-ին կետում առաջարկվող լրացման նպատակն է սահմանել, որ Արցախյան և Աֆղանստանի պատերազմի 2-րդ խմբի զինհաշմանդամները, ի տարբերություն Հայրենական պատերազմի վետերանների, Արցախյան և Աֆղանստանի պատերազմներում զոհվածների ընտանիքների և 1-ին խմբի զինհաշմանդամների, ազատվում են միայն 2010 թվականի համար հաշվարկված գույքահարկից:
2. Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում առաջարկվող լրացումը պայմանավորված է այն նկատառումով, որպեսզի Աֆղանստանի պատերազմի 1-ին խմբի զինհաշմանդամները և զոհվածների ընտանիքները նույնպես օգտվեն որոշմամբ սահմանված արտոնություններից:
3. Որոշման 2-րդ կետը 3-րդ ենթակետով լրացնելու առաջարկը նպատակ ունի որոշմամբ սահմանվող գույքահարկի արտոնությունները տարածել նաև Արցախյան և Աֆղանստանի պատերազմի 2-րդ խմբի զինհաշմանդամների վրա ևս:
4. Որոշումը 2.*1. կետով լրացնելու նպատակն է, որ գույքահարկի սահմանված արտոնությունները տարածվեն ոչ միայն Որոշման 2-րդ կետում նշված անձանց սեփականության իրավունքով պատկանող բնակելի նշանակության շինությունների վրա, այլև, դրանց բացակայության դեպքում, այն շինությունների վրա, որտեղ հաշվառված են այդ անձինք: Ընդ որում, եթե 2-րդ կետում նշված անձանց սեփականության իրավունքով պատկանում են մեկից ավելի բնակելի նշանակության շինություններ, ապա արտոնությունները տարածվեն միայն դրանցից մեկի նկատմամբ:
5. Որոշումը 4-րդ կետով լրացնելու առաջարկի նպատակն է կանոնակարգել նաև այն դեպքերը, երբ Որոշման 2-րդ կետում նշված անձանցից ոմանք կհրաժարվեն գույքահարկի արտոնության տրամադրումից:
6. Որոշումը 6-րդ կետով լրացնելու առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որպեսզի Որոշմամբ սահմանվող արտոնությունները չտարածվեն նաև Որոշման ընդունումից հետո սեփականության իրավունքով ձեռք բերված բնակելի նշանակության շինությունների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ այն շինությունների վրա, որտեղ հաշվառված են արտոնությունից օգտվելու իրավունք ունեցող անձինք:

Նախաձեռնության հեղինակ
Երևան քաղաքի ավագանու անդամներ՝

Գ. Գրիգորյան

Ա. Գևորգյան

Ի. Դարբինյան

Հ. Այվազյան

Պ. Փլավչյան

ՏԵՂԵԿԱՆՔ

Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի ապրիլի 12-ի N 83-Ա որոշման մեջ առաջարկվող փոփոխություններ և լրացումներ կատարելու առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին

Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի ապրիլի 12-ի N 83-Ա որոշման մեջ առաջարկվող փոփոխություններ և լրացումներ կատարելու առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

Նախաձեռնության հեղինակ
Երևան քաղաքի ավագանու անդամներ՝

Գ. Գրիգորյան

Ա. Գևորգյան

Ի. Դարբինյան

Հ. Այվազյան

Պ. Փլավչյան